ծանօթութիւն վկայութիւն 'ի վերայ բանիս մէջ անձանց և բնութեան ձերոյ իւրաքանչիւրոք ունիք, ուրեմի զի՞նչ արարից այսպիսի անառակ բնութեան և զի արդ կարի կառավարել սմայ որպէս ամենեքեանս 'ի նոյն բնութենէ որ ինք ըստ ինքեան ունի միենոյն բնութիւնս փոփոխական, զոր ինչ որ այսօր երևի գեղեցիկ՝ վաղիւն տգեղ, զոր ինչ ժամանակի քաղցու քաղցր, յետ ագենալուն անհամ, զոր ոք 'ի բնութենէ մերմէ համարիս կալոյ հաստատուն 'ի վերայ մտաց բարեաց և տացես նմայ կարողութիւն զի դատեսցի մեղաւորս զի նոյն ինքն մեղելոց է իբրև զիս և իբրև քեզ և իբրև մեղաւորն, ուրեմն զի արդ կարիցէ նայ դատել ոք իրաւամբ և արդարութեամբ, եթէ ոչ նոյն դատաւոր 'ի պատճառէ ինքնակալութեան և կամ մեղաց իւրոց թոյլ տացէ մեղաւորաց իւրոց, զի այսու դատաւոր և դատախազ միաբան գլորին ըստ ասացելոյն բանին Տեառն կուր՝ կուրի առաջնորդէ երկոքին անկանին 'ի խորխորատ, ուրեմն երկայնամիտ լերուք ընթերցողք և լուարուք բանից իմոց, զի ոչ միայն ասեմ, նաև հաստատեմ 'ի միտս ձեր, զի յոյժ ամօթ է մեզ ունենալով ծայրագոյն զօրութիւն բանական հոգոյ ընդ մարմինս մեր և ազատապէս կեանք 'ի վերայ երկրի որ ոչ ոք 'ի ներքոյ արեգական կարէ բառնալ 'ի մէնջ զօրութիւն հոգոյ մեր և ոչ իշխել կենաց և